

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ՍՈԼՖԵՉՈ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1) Բարձրությունը հնչյունի հատկություններից մեկն է և կախված է.

- 1) տատանումների տևողությունից
- 2) տատանումների ուժգնությունից
- 3) տատանումների թափից
- 4) տատանումների հաճախականությունից

2) Բացարձակ բարձրություն ունեցող հնչյունները կոչվում են

- 1) երաժշտական հնչյուններ
- 2) լադ
- 3) երաժշտական համակարգ
- 4) լարվածք

3) Երաժշտական համակարգի հնչյուններն ըստ բարձրության հաջորդականորեն դասավորված՝ կոչվում են

- 1) լադ
- 2) տոնայնություն
- 3) գամմա
- 4) հնչյունաշար

4) Ինտերվալները տարբերվում են միմյանցից

- 1) աստիճանային և տոնային մեծությամբ
- 2) բացարձակ և լրացուցիչ մեծությամբ
- 3) աստիճանային և տոնային բարձրությամբ
- 4) բացարձակ և լրացուցիչ բարձրությամբ

5) Մեծ սեքստան կազմված է

- 1) 7 աստիճանից և 6 տոնից
- 2) 7 աստիճանից և 5.5 տոնից
- 3) 6 աստիճանից և 5 տոնից
- 4) 6 աստիճանից և 4.5 տոնից

6) Մծց.5-ն այն ինտերվալն է, որը

- 1) հանդիպում է բնական մինորում և բաղկացած է 3.5 հնչյունից
- 2) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 4 տոնից
- 3) հանդիպում է բնական մաժորում և բաղկացած է 3 աստիճանից
- 4) հանդիպում է հարմոնիկ մաժորում և մինորում և բաղկացած է 3 տոնից

7

Փոքրացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

- 1) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից մեկ տոնով
- 2) փոքր են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
- 3) փոքր են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
- 4) փոքր են մեծ ինտերվալներից կես տոնով

8

Մեծացրած կվարտսեքստակորդի կառուցվածքն է.

- 1) մձց.4 + փ.3
- 2) մք.4 + մ.3
- 3) մ.3 + մձց.3
- 4) փքց.4 + մ.3

9

Կվարտսեքստակորդը եռահնչյան

- 1) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
- 2) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
- 3) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
- 4) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

10

D₂-ը կառուցվում է

- 1) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + փ.3
- 2) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3
- 3) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + փ.3
- 4) 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + մ.3 + փ.3

11

VII³-ը մինորում ունի հետևյալ կառուցվածքը.

- 1) մձց.2 + փ.3 + փ.3
- 2) մ.2 + փ.3 + փքց.2
- 3) փ.3 + մձց.2 + փ.3
- 4) փ.3 + մ.2 + փ.3

12

II⁵-ը հարմոնիկ մաժորում

- 1) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.3 + մ.2
- 2) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + մ.3
- 3) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2
- 4) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + փ.3 + մ.2

13

Լադի բոլոր հնչյունների հաջորդաբար հնչողությունը կոչվում է

- 1) արպեջիո
- 2) տոնայնություն
- 3) հնչյունաշար
- 4) գամմա

14

Համանուն տոնայնություններն ունեն

- 1) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
- 2) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
- 3) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
- 4) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ

15

Մելոդիկ մաժորին բնորոշ է

- 1) 6⁻, 7⁻ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
- 2) 6⁻, 7⁻ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
- 3) 6⁺ աստիճանը
- 4) 7⁺ աստիճանը

16

Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

- 1) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական, Լոկրիական
- 2) Միքսոլիդիական, Կրկնակի մեծացրած, Փոյուզիական, Հարմոնիկ
- 3) Իոնական, Անհեմիտոն, Դորիական, Լիդիական
- 4) Լիդիական, Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական

17

Մելոդիկ մինորին բնորոշ է

- 1) 6⁺, 7⁺ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
- 2) 6⁻, 7⁻ աստիճանները վերընթաց կարգով շարժվելիս
- 3) 6⁺, 7⁺ աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս
- 4) 6⁻, 7⁻ աստիճանները վերընթաց և վարընթաց կարգով շարժվելիս

18

Միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը կոչվում է

- 1) տակտ
- 2) ռիթմ
- 3) մետր
- 4) չափ

19

Տնողությունների բաժանման առանձնահատուկ ձևերն են

- 1) դուռը, տրեմոլոն, սեպտորը
- 2) սեպտորը, սեքստորը, տրիոլը
- 3) սեքստորը, կվինտորը, տրեյը
- 4) սինկոպան, տրիոլը, կվարտորը

20

Բարդ և խառը չափերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

- 1) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից
- 2) բարդ չափերը բաղկացած են միևնույն տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից
- 3) բարդ չափերը բաղկացած են միևնույն պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն կամ տարբեր պարզ տակտերից
- 4) բարդ չափերը բաղկացած են տարբեր պարզ տակտերից, խառը չափերը բաղկացած են միևնույն տակտերից

21

Բարդ տակտերում կա այնքան խումբ, որքան

- 1) նոտաների քանակն է
- 2) տակտերի քանակն է
- 3) հնչյունների քանակն է
- 4) պարզ չափերի քանակն է

22

Հին ֆրանսիական բանալին

- 1) դրվում է հնգագծի առաջին տողի վրա և ցույց է տալիս առաջին օկտավայի ֆա նոտայի տեղը
- 2) դրվում է հնգագծի երրորդ տողի վրա և ցույց է տալիս առաջին օկտավայի սոլ նոտայի տեղը
- 3) դրվում է հնգագծի սկզբում և ցույց է տալիս առաջին օկտավայի ֆա նոտայի տեղը
- 4) դրվում է հնգագծի առաջին տողի վրա և ցույց է տալիս առաջին օկտավայի սոլ նոտայի տեղը

23

Ռեճ նշանը հնգագծի չորրորդ գծի վրա կոչվում է

- 1) տենորի բանալի
- 2) մեցցո-սոպրանոյի բանալի
- 3) սոպրանոյի բանալի
- 4) ալտի բանալի

24

Նշվածներից ո՞րն է համարվում մելիզմ.

- 1) տրիո
- 2) տրեյ
- 3) տրիոլ
- 4) տրեմոլո

25

Հետևյալ տերմինները՝ **Commodo, Prestissimo, Agitato, Amabile, Doloroso** նշանակում են (ըստ հերթականության)

- 1) հարմարավետ, գրգռված, հանգիստ, թախծալի, տխուր
- 2) թախծալի, արագ, զգացմունքով, կրակոտ, կրքոտ
- 3) հարմարավետ, ծայրահեղ արագ, հուզված, հաճելի, թախծալի
- 4) հանգիստ, ծայրահեղ արագ, հուզված, շարժուն, թախիժով

26

Հարմոնիայում եռահնչյունները կարող են դասավորվել

- 1) խիտ և խառը
- 2) լայն և խառը
- 3) խիտ, լայն և խառը
- 4) խիտ և լայն

27

Տոնայնությունների դասակարգման մեջ երկրորդ կարգի ազգակցության հիմքում ընկած է

- 1) հարմոնիկ D եռահնչյունների ընդհանրությունը
- 2) հարմոնիկ S և D եռահնչյունների ընդհանրությունը
- 3) T եռահնչյունների ընդհանրությունը
- 4) S և D եռահնչյունների ընդհանրությունը

28

Պոլիֆոնիկ շարադրանքում նմանակումը կոչվում է

- 1) ֆուգա
- 2) կանոն
- 3) կոնտրապունկտ
- 4) իմիտացիա

29

Վարիացիոն ձևն ունի հետևյալ տարատեսակները.

- 1) Հնագույն, խառը և ազատ
- 2) Հնագույն և ազատ
- 3) Հնագույն, խիստ և ազատ
- 4) Հնագույն, խիստ և խառը

30

Ռոնդո- սոնատը այն ձևն է, որն ունի հետևյալ տառային սխեման

- 1) ABACAB¹A
- 2) ABCBA
- 3) ABACADA
- 4) ABCAB


31

Որոշել հատվածի տոնայնությունը.

The musical score is for a piano piece in 3/4 time, key of E major (one sharp). It consists of two systems of four measures each. The first system starts with a piano (*p*) dynamic and includes four measures with 'Ped.' markings. The second system includes a crescendo (*cresc.*) dynamic and four measures with fingering numbers: 5, 4, 3, 4 in the first measure; 5, 4, 5, 4, 3-5 in the second measure. The bass line features a triplet in the second measure of the second system.

- 1) fis moll
- 2) cis moll
- 3) A dur
- 4) E dur

32 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել լադերը.




- 1) Իոնական, Փոյուգիական, Միքսոլիդիական, Լոկրիական
- 2) Մինոր, Ամբողջատոն, Էոլական, Լիդիական
- 3) Դորիական, Լիդիական, Փոյուգիական, Միքսոլիդիական
- 4) Մաժոր, Լիդիական, Իոնական, Միքսոլիդիական,

33 Ո՞ր շարքում են միայն բնորոշ ինտերվալներ.




34 Ո՞ր տոնայնությունների մեջ է հնչում հետևյալ համահնչունը.



- 1) As dur- as moll, F dur- f moll
- 2) Des dur- des moll, B dur-b moll
- 3) Es dur- es moll, G dur- g moll
- 4) F dur- a moll, As dur- f moll

35


Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել ակորդները.



- 1) Մաժ3⁵, D3⁴, II5⁶, VII7, Մին4⁶, Փքց6
- 2) Փքց3⁵, D7, II2, D5⁶, Մաժ6, Մձց4⁶
- 3) Մձց3⁵, VII5⁶, D5⁶, II7, Մաժ6, Մին6
- 4) Մին3⁵, D5⁶, VII3⁴, II3⁴, Փքց4⁶, Մաժ6

36



Որոշել ակորդների տոնայնություն(ներ)ը.



- 1) Des dur- des moll
- 2) b moll
- 3) Des dur
- 4) B dur- b moll

37

Ո՞ր շարքում են բոլոր լուծումները ճիշտ.



- 1) 3/4
- 2) 4/4
- 3) 6/4
- 4) 6/8

- 1) Բասի՝ ges, H; Ջութակի՝ cis³, g; Սոպրանոյի՝ h¹, as; Ալտի՝ g, d²; Տենորի՝ fis, e¹
- 2) Բասի՝ Es, h; Ջութակի՝ fis³, f; Ալտի՝ f, as²; Բարիտոնի՝ dis, e¹; Սոպրանոյի՝ h¹, a
- 3) Բասի՝ Des, H; Ջութակի՝ fis³, f; Ալտի՝ f, as²; Սոպրանոյի՝ h¹, ais; Տենորի՝ dis, e¹
- 4) Բասի՝ Es, h; Ջութակի՝ dis³, f; Ալտի՝ g, as²; Սոպրանոյի՝ h¹, ais; Տենորի՝ dis, e¹

40

Ըստ հերթականության նշել տոնայնությունները, որոնցում կինչի հատվածը՝ փոխադրելով փ.6 վար, քրոմատիկ կիսատոն վեր, արտի բանալի.



13



- 1) A dur, Gis dur, G dur
- 2) B dur, As dur, F dur
- 3) A dur, G dur, F dur
- 4) F dur, D dur, Es dur

41

Ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Կաքավի երգը».

- 1) Տիգրան Չուխաջյան
- 2) Բարսեղ Կանաչյան
- 3) Ռոմանոս Մելիքյան
- 4) Կոմիտաս

42

Ո՞վ է հայկական առաջին գործիքային կոնցերտի հեղինակը.

- 1) Արամ Խաչատրյան
- 2) Առնո Բաբաջանյան
- 3) Գրիգոր Եղիազարյան
- 4) Ալեքսանդր Հարությունյան

43

Ավետ Տերտերյանի ո՞ր սիմֆոնիայի կազմի մեջ է ընդգրկվել երգեհոնը.

- 1) թիվ 1
- 2) թիվ 3
- 3) թիվ 7
- 4) թիվ 2

44

Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հայկական «Հնգյակի» անդամ.

- 1) Տիգրան Մանսուրյան
- 2) Երվանդ Երկանյան
- 3) Ադամ Խուրդյան
- 4) Գրիգոր Եղիազարյան

45

Ո՞ր կոմպոզիտորի արվեստում է ձևավորվել ծրագրային «սիմֆոնիկ պոեմի» ժանրը.

- 1) Ֆրանց Շուբերտ
- 2) Ֆելիքս Մենդելսոն
- 3) Յոհաննես Բրամս
- 4) Ֆերենց Լիստ

46

Դաշնամուրային ո՞ր ժանրին չի անդրադարձել Սերգեյ Ռախմանինովը.

- 1) սոնատ
- 2) նոկտյուրն
- 3) պրելյուդ
- 4) էտյուդ

47

Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել Գոսերով սիմֆոնիան.

- 1) Տիգրան Մանսուրյան
- 2) Էդվարդ Միրզոյան
- 3) Անուշավան Տեր-Ղևոնդյան
- 4) Ղազարոս Սարյան

48

Կլաուդիո Աբադո, Եվգենի Մրավինսկի, Անտոն Գակկել, Դավիթ Խանջյան՝
Հանրաճանաչ

- 1) ջութակահարներ են
- 2) թավջութակահարներ են
- 3) կոմպոզիտորներ են
- 4) դիրիժորներ են

49

Ի՞նչ է նշանակում «կլավեսին» բառի արմատը.

- 1) հնչյուն
- 2) գործիք
- 3) բանալի
- 4) ստեղն

- 50 Կոմպոզիտորական ի՞նչ տեխնիկա է կիրառել Առնո Բարաջանյանը դաշնամուրային «Վեց պատկեր» ցիկլում.
- 1) դոդեկաֆոն
 - 2) պոլիֆոնիկ
 - 3) պուանտիլիստական
 - 4) մոդալ
- 51 Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «թուրքական ոճով» ռոնդոն նշվածներից ո՞ր ստեղծագործության ֆինալն է.
- 1) թիվ 41 C-dur սիմֆոնիա
 - 2) թիվ 15 F-dur սոնատ
 - 3) թիվ 40 g-moll սիմֆոնիա
 - 4) թիվ 11 A-dur սոնատ
- 52 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի ստեղծագործության.
- 1) «Պատերազմ և խաղաղություն»
 - 2) «Խովանշչինա»
 - 3) «Իվան Սուսանին»
 - 4) «Մազեպա»
- 53 Նշվածներից ո՞վ է «Պսկովուհին», «Սերվիլյա», «Մոցարտն ու Սալերին», «Թագավորական հարսնացուն» օպերաների հեղինակը.
- 1) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով
 - 2) Անտոն Ռուբինշտեյն
 - 3) Ալեքսանդր Բորոդին
 - 4) Մոդեստ Մուսորգսկի
- 54 Ո՞վ է Սերգեյ Պրոկոֆևի «Պողպատյա թռիչք» բալետի լիբրետոյի հեղինակը (Ս.Պրոկոֆևի հետ համատեղ).
- 1) Նիկոլայ Վոլկով
 - 2) Միրա Մենդելսոն
 - 3) Գեորգի Յակովլով
 - 4) Սերգեյ Ռադլով

55

Երգեհոնը

- 1) ստեղնաշարային-փողային գործիք է
- 2) ստեղնաշարային-կամիթային գործիք է
- 3) ստեղնաշարային լարային գործիք է
- 4) ստեղնաշարային գործիք է

56

Ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործության մեջ XIX դարի իտալական օպերային արվեստը հասավ իր զարգացման կիզակետին.

- 1) Ջակոմո Պուչինի
- 2) Ջուզեպպե Վերդի
- 3) Ջոակինո Ռոսսինի
- 4) Վինչենցո Բելլինի

57

Ո՞ր կոմպոզիտորն է «Հունգարական պարերի» հեղինակը.

- 1) Յոհաննես Բրամս
- 2) Ռոբերտ Շուման
- 3) Ֆելիքս Մենդելսոն
- 4) Ֆերենց Լիստ

58

Ջովաննի Պալեստրինա, Օրլանդո դի Լասսո, Ժոսկեն Դեպրե՝

- 1) կատարողներ են
- 2) փիլիսոփաներ են
- 3) կոմպոզիտորներ են
- 4) ջութակի վարպետներ են

59

Նշված կոմպոզիտորներից ո՞վ չի գրել «Պրելյուդներ և ֆուգաներ» դաշնամուրային ցիկլ.

- 1) Դմիտրի Շոստակովիչ
- 2) Ալֆրեդ Շնիտկե
- 3) Յոհան Սեբաստիան Բախ
- 4) Ռոդիոն Շչեդրին

60

Ու՞մ գրչին է պատկանում «Գերմանական Ռեքվիեմը»

- 1) Ալֆրեդ Շնիտկե
- 2) Տիգրան Մանսուրյան
- 3) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
- 4) Յոհաննես Բրամս